ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 291

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Ջամշլու բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքը (Ջամշլու բնակավայրի մասով) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-090-0106-0013 կադաստրային ծածկագրով 0.53277 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր	02-090-0106-0013 կադաստրային ծածկագրով 0.53277 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր
Ջամշլու բնակավայրի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների միջնաժամկետ միջոցառումների բաժին (5-10 տարի)	Ջամշլու բնակավայրի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների առաջնահերթ միջոցառումների բաժին (1-5 տարի)

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ջամշլու բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի Ջամշլու բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, « 16 » «հուլիսի» 2024թ.